

# РЕГИОН И МИР


научно-аналитический журнал

том XII, № 3, 2021

Журнал включен

в реестр научных периодических изданий

Высшей аттестационной комиссии Республики Армения,  
в базу данных Российской индекса научного цитирования (РИНЦ)  
и научную электронную библиотеку eLIBRARY.RU



Общественный институт политических  
и социальных исследований  
Черноморско-Каспийского региона

## Բովանդակություն

### ԹԱՂԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### **Պետրոսյան Լ. Ռ.**

|  |    |
|--|----|
| Իրանական միջուկային խնդրի ազդեցությունը ԻԻՀ ներքաղաքական իրադրության վրա   | 5  |
| ՄՎԿ ՎԽ պատժամիջոցների համատեքստում   |    |
| <b>Գրիգորյան Ս. Մ.</b>   |    |
| Իսլամական արմատականությունը Ուգրեկատանում (20-րդ դարի վերջ-21-րդ դարի սկիզբ)   | 15 |
| <b>Կոնոնով Ե. Ֆ.</b>   |    |
| Դոնրասր Ուկրաինայի տարածաշրջանային համակարգում   | 21 |
| <b>Ռուժանսկի Վ. Գ.</b>   |    |
| Իսրայելի ռազմաօդային ուժերի տեխնոլոգիական քոլեջի գործունեությունը<br>տեխնոլոգիական-հայրենասիրական կրթության գարզացման վերաբերյալ | 34 |

### ԻՐԱՎՈՒՔ

#### **Հարությունյան Դ. Գ.**

|   |    |
|---|----|
| Սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի հասկացությունը և իրավական բնույթը՝<br>Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրինակով | 43 |
| <b>Հարությունյան Դ. Գ.</b>  |    |
| Սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի զարգացումը<br>Ռուսաստանում. Պատմակարավական ակնարկ   | 47 |
| <b>Մարտիրոսյան Տ. Լ.</b>  |    |
| Կենդանության օրոր դրոնոր հանդես գալու քաղաքացիակարգական կարգավորումը  | 52 |
| <b>Խաչատրյան Ն. Ա., Սահակյան Դ. Մ.</b>  |    |
| Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրական բացերը, առկա խնդիրները և<br>դրանց կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում            | 55 |
| <b>Բաղդասարյան Մ. Ռ.</b>  |    |
| Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հասկացությունը, հատկանիշները և<br>բրեակարավական բնութագիրը                              | 59 |

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### **Պողոսյան (Խաղբակյան) Գ. Հ.**

|  |    |
|--|----|
| Հայկական ճարտարապետական եւ տեղանվանական հուշարձանները Կանադայում         | 70 |
| <b>Մարգարյան Ս. Թ.</b>   |    |
| Գաղափարական ներքին տարածայնությունները Վերակազմակերպման առաջին տարիներին | 85 |

### ՄԵՎԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

#### **Լարիբյան Վ. Կ.**

|  |    |
|--|----|
| Պարյայա ավանդույթը Ուղուայի մահիվաների կրոնական համայնքում | 90 |
|--|----|

### ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

#### **Քարիմյան Դ. Վ.**

|  |    |
|--|----|
| Ռուսաստանի Դաշնության կենսաթոշակային համակարգի<br>և կուտակային կենսաթոշակային ֆոնդերի պորտֆելների ընդհանուր նկարագրություն | 96 |
|--|----|

#### **Մինայան Ս. Ս.**

|  |     |
|--|-----|
| Նորամուծություն՝ որպես երկարաժամկետ կայուն տնտեսական աճի շարժի | 100 |
|--|-----|

#### **Կարապետյան Հ. Ռ.**

|   |     |
|---|-----|
| ՀՀ տնային տնտեսությունների ծախսերի անհավասարության գնահատումը<br>Ջինի գործակցի միջոցով դեկունպոգիցին եղանակով | 105 |
|---|-----|

#### **Սեղրակյան Մ. Ֆ.**

|   |     |
|---|-----|
| Բազե III: Տեսական հիմքը և ներդրումը ԵԱՏՍ երկրներում | 109 |
|---|-----|

#### **Գրիգորյան Գ. Հ.**

|  |     |
|--|-----|
| Հայրենական և միջազգային կոսմետիկ միջոցների արտադրության վերլուծություն | 116 |
|--|-----|

#### **Պետրոսյան Գ. Ս.**

|  |     |
|--|-----|
| Գիտնիքահենք տնտեսությունը: ՀՀ տնտեսության հեռանկարները և էկոնոմետրիկական մոդելավորումը | 120 |
|--|-----|

#### **Համբարձումյան Լ. Ս.**

|   |     |
|---|-----|
| Կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական ներգրավվածության ազդեցության գնահատումը | 124 |
|---|-----|

#### **Գևորգյան Ա. Վ.**

|   |     |
|---|-----|
| ՀՀ տնտեսության ներդրումների ներգրավման ռազմավարության մշակման մեթոդաբանությունը | 132 |
|---|-----|

#### **Սարյան Կ. Բ.**

|   |     |
|---|-----|
| Հարկային բենք եվ դրա գնահատման մեթոդաբանական առանձնահատկությունները ՀՀ-ում: | 138 |
|---|-----|

|                               |     |
|-------------------------------|-----|
| Իրական հարկային բենք գաղափարը | 138 |
|-------------------------------|-----|

### ՓԻԼԻՍՈՓԱՅՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՅԻՌՈՒԳԻԱ

#### **Գրիգորյան Է. Ռ.**

|  |     |
|--|-----|
| Նոր հայաց փիլիսոփայությանը և նրա ակունքներին | 143 |
|--|-----|

### ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆԵՐ

#### **Խեչոյան Արմեն**

|   |     |
|---|-----|
| Լույս է տեսել 1915 թվականի Հայոց ցեղասպանության հատուկ ռազմական տրիբունայի մասին գրքի<br>ռուսերեն թարգմանությունը | 155 |
|---|-----|

#### **Պողոսյան (Խաղբակյան) Գ. Հ.**

|  |     |
|--|-----|
| Միջազգային գիտաժողով Սանկտ-Պետերբուրգում | 156 |
|--|-----|

#### **Մարգարյան Ս. Թ.**

|  |     |
|--|-----|
| Միջազգային գիտաժողով Երևանում<br>«Գլածոր» համալսարանը 30-ամյակին նվիրված հոբեյանական գիտաժողով | 157 |
|--|-----|

|  |     |
|--|-----|
|  | 158 |
|--|-----|

# Կենսաթոշակային Փոնդերում մասնակցության վրա Փինանսական ներգրավվածության ազդեցության գնահատումը

Համբարձումյան Լ. Ս.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,  
ֆինանսների ամբիոնի սասպիրանտ(Երևան, Հայաստան)  
lusine.hambardzumyan2018@gmail.com

**Վճռորոշ բառեր** – կենսաթոշակային Փոնդեր, կամավոր կենսաթոշակային համակարգ, ֆինանսական ներգրավվածություն, Փինանսական գրագիտություն, ինստիտուտների նկատմամբ վստահություն

## Оценка влияния финансовой вовлеченности на участие в пенсионных фондах

Амбарцумян Л. С.

Армянский государственный экономический университет, аспирант (Ереван, Армения)  
lusine.hambardzumyan2018@gmail.com

**Аннотация.** Демографические изменения последних десятилетий создают новые вызовы в области социального обеспечения и вынуждают правительства пересматривать пенсионные системы. Во многих странах наблюдается общая тенденция повышения роли добровольных пенсионных схем. В этой связи важно понимать, что способствует спросу на добровольное участие в пенсионных фондах, что будет полезно как для правительства, так и для регулирующих органов. Большинство научных исследований на эту тему сосредоточено на влиянии финансовой грамотности и, в некоторых случаях, на доверие к институтам. Целью данного исследования является выявление основных факторов, влияющих на участие в пенсионных фондах, оценка взаимосвязи и предложение модели измерения влияния этих факторов. Мы обнаружили, что финансовая вовлеченность также положительно влияет на участие в добровольных пенсионных фондах и, по сравнению с другими факторами, оказывает на него более значительное влияние.

**Ключевые слова.** пенсионные фонды, добровольная пенсионная схема, финансовая вовлеченность, финансовая грамотность, доверие к институтам

## The Assessment of the Impact of Financial Inclusion on the Participation in Pension Funds

Hambardzumyan L. S.

Armenian State University of Economics, PhD Student (Yerevan, Armenia)  
lusine.hambardzumyan2018@gmail.com

**Abstract.** The demographic changes over the past decades are creating new challenges in the field of social security and forcing governments to review pension systems. In many countries, there is a general trend of increasing the role of voluntary pension systems. In this regard, it is important to have a better understanding of what contributes to the demand in voluntarily participating in pension funds, which will be useful both for governments and for regulatory agencies. Most academic research on the topic is concentrated on the impact of financial literacy and, in some cases, trust in institutions. The purpose of this study is to identify the main factors that affect participation in pension funds, to assess the relationship and to propose a model to measure the impact of these factors. We find that financial inclusion also has a positive effect on participation in voluntary pension funds, and, compared with other factors, has more significant impact on it.

**Keywords.** pension funds, voluntary pension system, financial inclusion, financial literacy, trust in institutions

## ՆԵՐԱՎԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներին նկատվող ժողովրդական փոփոխությունները նոր մարտահրավերներ են առաջ բերում սոցիալական ապահովության ոլորտում և ստիպում են երկրների կառավարություններին վերանայել կենսաթոշակային համակարգերը։ Դրանք ենթադրում են երկարաժամկետ քաղաքական որոշումների կայացում, սակայն հաճախ այդ որոշումների ազդեցությունը կենսաթոշակառուների բարեկեցության վրա հստակ չէ։ Համաշխարհային քանկի, Եվրոպական հանձնաժո-

ղովի և ՏՀՀԿ-ի կողմից առաջարկվող հիմնական լուծումներից մեկը, որը հանգեցնում է ապագայում կենսաթոշակային վճարումների համարժեքության բարձրացմանը, կուտակային կենսաթոշակային սինեմաների դերի ուժեղացումն է։ Սակայն քանի որ այլ ուղղությունների համեմատ՝ կենսաթոշակային բարեփոխումները համարվում են շատ զգայուն թեմա, կենսաթոշակային տարիքի շեմի բարձրացումը, պարտադիր կուտակային հատկացումների դրույքավերի սահմանումը և հետազայտումը ոչ միայն հանգեցնում են թե՛

գաղափարական վեճերի, այլև ստիպում են մարդկանց բողոքել փողոցներում, ինչի հետևանքով կառավարությունները կարող են հետաձգել կամ նահանջել անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելուց: Բացի դրանից, բնակչության որոշ խմբերի համար դեռ կենսաթոշակային եկամուտների հարցը մնում է չուժված, քանի որ նրանք դուրս են մնում պարտադիր կենսաթոշակային համակարգերից (օրինակ՝ գյուղատնտեսությամբ, ոչ ստանդարտ աշխատանքային ձևերով գրադիվորներ և այլն):

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով բազմաթիվ երկրներում նկատվում է կամավոր կենսաթոշակային համակարգերի դերի բարձրացմանն ուղղված ընդհանուր միտում: Այս առումով կարևոր է ավելի խորլ պատկերացում ունենալ, թե ինչն է նպաստում բնակչության կողմից կենսաթոշակային ֆոնդերում ներդրումներ կատարելու պահանջարկին, ինչն օգտակար կլինի թե՛ կառավարությունների, թե՛ ոլորտը կարգավորող կառույցների համար:

Գիտական շրջանակներում թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում են կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական գրագիտության ազդեցությունը բացահայտելուն, և հազվադեպ են վերլուծությունները մյուս կարևոր գործոնների մասով:

Հոդվածի նպատակն է մի կողմից բացահայտել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ազդող հիմնական գործոնները, գնահատել կապերը, և մյուս կողմից՝ առաջարկել մոդել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա այդ գործոնների ազդեցությունը բացատրելու համար:

Հոդվածի սկզբնամասում ներկայացվում են գրականության ուսումնասիրության արդյունքները, և հետագա հաշվարկների և եմպիրիկ արդյունքների իրատեսականության համար տեսական հիմքեր են ապահովում: Այնուհետև ներկայացվում են 45 երկրների կտրվածքով տվյալների հավաքագրման և եմպիրիկ վերլուծության իրականացման համար հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև ֆինանսական ներգրավվածության ինդեքսի կառուցման սկզբունքները: Վերլուծության արդյունքում բացահայտվում են գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափերը և առաջարկվում է ռեգրեսիոն մոդել՝ այդ կապերը բացատրելու և կանխատեսելու համար: Հոդվածը ամփոփվում է համապատասխան եզրակացություններով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Գիտական գրականության մեջ եմպիրիկ ուսումնասիրությունների լայն շրջանակ նվիրված է կենսաթոշակային պլանավորման վրա ֆինանսական գրագիտության ազդեցությանը: ԱՄՆ-ում, Նիդեռլանդներում, Ֆինլանդիայում,

Շապրնիայում, Կանադայում, Չիլիում, ՌԴ-ում և մի շարք այլ երկրներում անցկացված հետազոտությունները վկայում են, որ ֆինանսական գիտելիքների ավելի բարձր մակարդակ ունեցող անձինք ավելի հաճախ են խնայողությունների պլանավորում իրականացնում կենսաթոշակային տարիքի համար:

Ուսումնասիրելով Խտախայի բանկի կողմից 2010 թ. իրականացված՝ տնային տնտեսությունների եկամուտների և հարաբերությունների վերաբերյալ հարցումները [1] Օ. Ռիչին և Ս. Կարատելիին ապացուցում են, որ ֆինանսական գիտելիքները ազդում են ոչ միայն կենսաթոշակային պլանավորման վրա, այլ նաև մասնավոր կենսաթոշակային համակարգ մտնելու որոշման վրա [9]: Օ. Լանդերենը և Կ. Մարտինեսը, իհմնվելով 2004 թ. և 2006 թ. Չիլիում Սոցիալական ապահովության հետազոտությունների տվյալների վրա, պարզել են, որ ֆինանսապես ավելի գրագետ անձիք ավելի հավանական են, որ փոխեն իրենց կենսաթոշակային ֆոնդի տեսակը, ինչպես նաև կամավոր մասնակցեն կենսաթոշակային համակարգին [6] 2019 թ. մեր կողմից իրականացված վերլուծությունները <<ում ցույց են տվել, որ կենսաթոշակային ֆոնդերի հարցում ֆինանսապես գրագետ անձինք ավելի հետաքրքրված են. նրանց զգայի մասն ինքնուրույն է ընտրել իր կենսաթոշակային ֆոնդը և ավելի հաճախակի է ստուգում կենսաթոշակային հաշվի մնացորդը [14, էջ 298-303]:

Կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ազդող այլ գործոնների վերաբերյալ ուսումնասիրություններն ավելի սակավ են: Որոշ տնտեսագետների և սոցիոլոգների պնդմամբ՝ ինստիտուտների նկատմամբ վստահությունը ևս դիտարկվում է որպես ազդող գործոն, սակայն այն կարող է ունենալ երկակի ազդեցություն: Մի կողմից, ֆինանսական պայմանագրերի կնքման ժամանակ վստահության մակարդակն օգտագործելով որպես ֆինանսական ինստիտուտների նկատմամբ վստահության ցուցանիշ՝ Օ. Ռիչին և Ս. Կարատելիին ցույց են տալիս, որ վստահությունը դրական ազդեցություն է ունենում մասնավոր կենսաթոշակային համակարգերին անդամակցելու որոշումների կայացման վրա [10]: Մյուս կողմից էլ, որոշ հետազոտողներ, օրինակ՝ Թեյլոր-Գուդրին, ընդգծում են, որ մարդկանց որոշակի խմբեր, այլընտրանքի բացակայության պատճառով, հավատում են, որ կառավարությունը թույլ չի տա նրանց «սոված» մնալ: Սա պահիվ վարքագիծ է, բայց այն, այնուամենայնիվ, ինչ-որ կերպ վստահություն է համարվում և ենթադրում է բացահայտական կապ կենսաթոշակային պլանավորման հետ՝ այն ինաստով, որ պետական կենսաթոշակային համակարգին վստահող մարդիկ ավելի քիչ են

հակված մասնակցելու կամավոր կենսաթոշակային սխեմաներին [12]:

Մեր կարծիքով, այս երկու գործոնները չեն կարող ամբողջովին բացատրել բնակչության կողմից կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության չափերը: Մասնավորապես, Փինանսապես գրագետ լինելու հանգամանքը միայն բավարար չէ, անհրաժեշտ է նաև, որ անձը ներգրավված լինի Փինանսական գործընթացներում: Բանկերի մասնաճյուղերի հեռավորությունը, գործարքային բարձր ծախսերը, հոգեբանական խոշընդուները կարող են խանգարել մարդկանց պատշաճ կերպով օգտվել Փինանսական ծառայություններից՝ նույնիսկ լինելով Փինանսապես գրագետ:

Փինանսական ներգրավվածությունը ենթադրում է, որ Փինանսական ծառայությունները, ինչպիսիք են ավանդային և խնայողական հաշիվները, վճարային ծառայությունները, վարկերը և ապահովագրությունը, հեշտությամբ մատչելի են սպառողներին, և վերջիններս ակտիվորեն և արդյունավետ կերպով օգտագործում են այդ ծառայությունները իրենց կարիքները բավարարելու նպատակով [3, էջ 1]: Փինանսական ներգրավվածությունը ճանաչվում է որպես «մի գործընթաց, որը նշանավորում է Փինանսական միջնորդների ծառայությունների բանակի, որակի և արդյունավետության բարելավումը, որն օգնում է բարելավել կանքը, ընդլայնել հնարավորությունները և ամրապնդել տնտեսությունը» [2, էջ 1]:

Նախնական փուլում Փինանսական ներգրավվածությունը ենթադրում է բանկում կամ այլ Փինանսական հաստատությունում ավանդային կամ գործառնական հաշվի առկայություն, որը կարող է օգտագործել վճարումների իրականացման և ստացման, ինչպես նաև գումար պահելու կամ կուտակելու նպատակով: Հետագա փուլերում Փինանսական ներգրավվածությունը ներառում է նաև Փինանսական հաստատությունների վարկերի հասանելիությունը, որոնք թույլ են տալիս ներդրումներ կատարել կրթության և գործարարության մեջ, ինչպես նաև ապահովագրական ծառայությունների օգտագործումը, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց ավելի լավ կառավարել Փինանսական ռիսկերը [4, էջ 2]:

Փինանսական ինստիտուտներին և ծառայություններին հասանելիություն ունենալը մարդկանց օգնում է ստանալ ավելի բարձր շահույթ կապատակից: Սա հանգեցնում է եկամուտների աճի և, հետևաբար, ազդում է տնտեսական աճի վրա [3, էջ 8]: Փինանսական ներգրավվածությունը նաև ընդլայնում է խնայողությունների առաջարկը Փինանսական ներդրումների համար, հեշտացնում է փոխանցումների գործընթացը, նվազեցնում է

գործարքային ծախսերը, բարձրացնում է Փինանսական խորության մակարդակը և այլն:

Քազմաթիվ գործոններ են ազդում երկրի Փինանսական ներգրավվածության մակարդակի վրա, ներառյալ՝ մեկ շնչին ընկնող եկամուտը, արդյունավետ կառավարումը, ինստիտուտների որակը, տեղեկատվության մատչելիությունը, նորմատիվ միջավայրը, Փինանսական գրագիտության մակարդակը և այլն [3, էջ 1]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Փինանսական ներգրավվածությունը կարող է հանդիսանալ այն գիխավոր գործոնը, որն ազդում է կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության չափի վրա: Մեր կողմից իրականացված վերոնշյալ հետազոտությունը ՀՀ-ում ևս փաստում է այդ մասին. ավանդ բանկում կամ այլ խնայողություններ ունեցող Փինանսապես գրագետ անձանց մոտեցումներն են պետք տարրերում են Փինանսապես գրագետ այն անձանց մոտեցումներից, ովքեր չունեն նմանատիպ խնայողություններ: Վերջիններիս միայն 7%-ն է կենսաթոշակային ֆոնդն ընտրել ինքնուրույն, իսկ նմանատիպ խնայողություններ ունեցողների՝ մոտ 52%-ը: Տարրերություն տեսնում ենք նաև կենսաթոշակային հաշվի միջոցները պարբերաբար ստուգելու հարցում. ավանդ բանկում կամ այլ խնայողություններ ունեցող անձանց մոտ 58%-ը տարվա ընթացքում առնվազն 1 անգամ ստուգում է, իսկ չունեցողների՝ մոտ 36%-ը [14, էջ 302]:

Նպատակ ունենալով ապացուցել վերոնշյալը տնտեսամաթեմատիկական մոդելների միջոցով՝ վերլուծության համար ձևակերպել ենք հետևյալ վարկածները.

1. Փինանսական ներգրավվածությունը դրականորեն ազդում է կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա,
2. Փինանսական գրագիտության և ինստիտուտների նկատմամբ վստահության համեմատ՝ Փինանսական ներգրավվածությունը ավելի էական ազդեցություն ունի կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ֆոնդերում մասնակցությունը կարող է արտահայտվել տարրեր կերպ, օրինակ՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցություն, հատկացումների չափերի ավելացում, մասնակցի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի տեսակների ընտրություն և այլն: Մեր վերլուծությունների համար որպես կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության ցուցանիշ ընտրել ենք երկրում կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության աստիճանը (մասնակիցների քանակ/աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակ):

Հետազոտության համար իրականացվել է խաչաձև-տարածական տվյալներով վերլուծություն (cross-sectional data analysis)` հիմնվելով զարգացած և զարգացող 45 երկրների (այդ թվում՝ <<Հ>> տվյալների վրա, որտեղ գործում են կամավոր կենսաթոշակային սխեմաներ): Հաշվի առներով, որ տվյալների մեծ մասը հասանելի են 2017թ. դրույժամբ, վերլուծության համար գրեթե բոլոր գործուների տվյալները ներկայացված են 2017թ. համար:

**Աղյուսակ 1 Զարգացած և զարգացող երկրներում կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության չափերը**  
(աղյուսակը կազմվել է հետինակի կողմից՝ ՏՀՀԿ-ի Pensions at a Glance [7, էջ 151] և Pension Markets in Focus [9, էջ 17] հաշվետվությունների տվյալների հիման վրա)

|                     | Երկրների<br>քանակ | Միջին | Մեջիան | Մասնդարս<br>շերտում | Նվազագույն | Վռավելագույն |
|---------------------|-------------------|-------|--------|---------------------|------------|--------------|
| Զարգացած<br>երկրներ | 32                | 30.6% | 25.1%  | 20.9%               | 1.3%       | 74.8%        |
| Զարգացող<br>երկրներ | 13                | 5.9%  | 4.4%   | 5.8%                | 0.03%      | 15.9%        |
| Ընդամենը            | 45                | 23.5% | 18.0%  | 21.1%               | 0.03%      | 74.8%        |

2. Երկրի ֆինանսական գրագիտության մակարդակի (FL) տվյալների համար օգտագործել ենք Standard & Poor's Global Ratings-ի կողմից վերջին՝ 2014 թ. իրականացված ֆինանսական գրագիտության վերաբերյալ հարցումների արդյունքները [5, էջ 23-25]: Հետազոտության ընտրությունը կապված է այն հանգամանքի հետ, որ ի տարբերություն ֆինանսական գրագիտության վերաբերյալ մյուս հարցումների՝ այն ընդգրկում է ավելի մեծ թվով երկրների տվյալներ:
3. FI-ն ներկայացնում է ֆինանսական ներգրավվածության մակարդակը: Երկրում ֆինանսական ներգրավվածության մակարդակը չափելու համար կառուցել ենք ինդեքս՝ համախմբելով հիմնական ցուցանիշները՝ հիմնվելով Համաշխարհային բանկի The Global Findex database 2017-ի դասակարգման վրա.
- I. Ֆինանսական հաստատություններում հաշիվ ունեցողներ (%)՝ տարիքը՝ 15+) (ACC),
- II. Նախորդ տարվա ընթացքում ֆինանսական հաստատություններում խնայողություններ ունեցողներ (%)՝ տարիքը՝ 15+) (SAV),
- III. Նախորդ տարվա ընթացքում ֆինանսական հաստատություններից վարչ վերցնողներ (%)՝ տարիքը՝ 15+) (BOR),
- IV. Ֆինանսական հաստատությունների միջոցով տեղական դրամական փոխանցումներ ուղարկած կամ ստացած անձինք (%)՝ տարիքը՝ 15+) (PAY),

Բազմագործում գծային ուղղեսփոն հավասարման մեջ օգտագործվել են հետևյալ ցուցանիշները.

1. LnVOL-ը ներկայացնում է երկրում կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության աստիճանի ընական հիմքով լոգարիթմը: Տվյալների համար հիմք ենք ընդունել ՏՀՀԿ-ի Pensions at a Glance [7, էջ 151] և Pension Markets in Focus [9, էջ 17] հաշվետվությունների տվյալները:

- V. Նախորդ տարվա ընթացքում թվային վճարումներ կատարած կամ ստացված անձինք (%՝ տարիքը՝ 15+) (DIG),
- VI. Վրտակարգ իրավիճակների ի հայտ գալու դեպքում անհրաժեշտ գումարը գտնելու հնարավորություն ունեցող անձինք (%՝ տարիքը՝ 15+) (FRES):

Ինդեքսի կառուցման համար վերը նշված ցուցանիշներն ընտրվել են այն սկզբունքով, որ ամրողությին արտահայտեն ֆինանսական ներգրավվածության գլխավոր բաղկացուցիչները՝ հաշիվ ունենալը (ACC), հաշվի օգտագործումը (PAY), վճարային ծառայություններից (DIG), խնայողություններից (SAV), վարկերից օգտվելը (BOR), ինչպես նաև ֆինանսական կայունությունը (FRES): Ինդեքսը կազմված է հետևյալ բանաձևով.

$$FI_i = w_1 * ACC_i + w_2 * SAV_i + w_3 * BOR_i + w_4 * PAY_i + w_5 * DIG_i + w_6 * FRES_i$$

Որտեղ  $w$ -ն ներկայացնում է բաղադրիչներից յուրաքանչյուրի կշիռը ինդեքսում: Չանի որ կշիռներն արտացոլում են ցուցանիշի կարևորությունը և ներդրումը ինդեքսում, և առաջարկվող ինդեքսում դրանք ունեն նույն կշիռը, այսինքն՝  $w_1 = 0,1667$ ,  $w_2 = 0,1667, \dots, w_6 = 0,1667$ , հետևաբար բանաձևն արտահայտում է ցուցանիշների պարզ թվարանական միջինը:

Նպատակ ունենալով հասկանալի, թե արդյոք այլ գործուներ կարող են ավելի լավ բացատրել երկրում կամավոր կենսաթոշակային ֆոնդերի մասնակցության չափերը (կամ առանձին, կամ լրումն գլխավոր ազդող գործուների), վերլուծության մեջ ներկայացրել ենք նաև

մակրոտնտեսական քաղաքականության կայունությունը և ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը:

4. INFL-ն ներկայացնում է 2000-2017 թթ. երկրում գնաճի մակարդակի ստանդարտ շեղումը, որը ներկայացնում է երկրում մակրոտնտեսական քաղաքականության կայունությունը: Ստանդարտ շեղումները հաշվարկել են Համաշխարհային բանկի Global Financial Development Database 2019 թ. հոկտեմբերի հաշվետվության մեջ ներկայացված տվյալների հիման վրա [13]:
5. TR-ը ներկայացնում է երկրում ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը: Տվյալների համար հիմք ենք ընդունել The Global competitiveness report 2017-2018-ի առաջին հենայան՝ ինստիտուտների վերաբերյալ հարցումների ամփոփ գնահատականները, որոնք վերա-

բերում են երկրում սեփականության իրավունքի պաշտպանությանը, քաղաքական գործիչների նկատմամբ վստահությանը, դատական համակարգի անկախությանը, պետական քաղաքականության թափանցիկությանը, ներդրողների շահերի պաշտպանությանը և այլն [11, էջ 328-329]:

#### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսուակ 2-ում ներկայացված են տարրեր գործոններից բաղկացած մոդելների պարամետրեր՝ հաշվարկված փոքրագույն քառակուսիների մեթոդով (տվյալները մշակված են Minitab վիճակագրական ծրագրով): Փակագծերում նշված են Ֆիշերի F-չափանիշները, որոնք ցույց են տալիս գործոնների ադեկվատության չափերը, իսկ \*\*\*, \*\* և \* աստղանիշերով նշված են համապատասխանաբար վիճակագրական նշանակալիությունը ներկայացնող P արժեքները <0.01, <0.05, <0.1:

**Այսուակ 2: Ուկրաինու վերլուծության արդյունքները**

|   | FL                   | FI                   | INFL                 | TR                   | $\beta_0$            | S                    | R <sup>2</sup> | R <sup>2</sup> adj | R <sup>2</sup> (pred) | Mallows' Cp | VIF                             | 10-fold S              | 10-fold R <sup>2</sup> |
|---|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------|--------------------|-----------------------|-------------|---------------------------------|------------------------|------------------------|
| 1 |                      |                      |                      |                      |                      | 0.0632***<br>(33.83) |                |                    |                       |             |                                 |                        |                        |
| 2 | 0.0620***<br>(26.61) |                      |                      |                      |                      |                      |                |                    |                       |             |                                 |                        |                        |
| 3 |                      |                      |                      |                      | 0.0383**<br>(4.43)   |                      |                |                    |                       |             |                                 |                        |                        |
| 4 |                      |                      |                      |                      | -0.0383***<br>(2.92) |                      |                |                    |                       |             |                                 |                        |                        |
| 5 | 0.0350**<br>(3.96)   | 0.0690***<br>(12.02) | 0.0997***<br>(29.63) | 0.0364**<br>(4.16)   | -0.0356*<br>(2.69)   | 0.028<br>(19.13)     | 1.1268         | 47.7               | 45.2                  | 38.4        | 7.9                             | 2.89                   | 39.05%                 |
| 6 | 0.0284<br>(2.59)     | 0.0821***<br>(15.27) | 0.0300*<br>(2.78)    | -0.0448***<br>(4.09) | -0.137<br>(14.97)    | -1.37<br>(15.10)     | 1.08665        | 52.5               | 49                    | 36          | 5.6                             | 3.19,<br>1.41,<br>2.9  | 38.54%                 |
| 7 | -0.0444***<br>(4.09) | -1.03<br>(12.41)     |                      |                      |                      |                      | 1.0891         | 52.3               | 48.8                  | 40.4        | 5.8                             | 2.65,<br>3.76,<br>3.05 | 41.26%                 |
|   |                      |                      |                      |                      |                      | 1.06619              | 55.4           | 50.9               | 37.2                  | 5           | 2.79,<br>4.37,<br>1.48,<br>3.09 | 1.17323                | 1.1533                 |
|   |                      |                      |                      |                      |                      |                      |                |                    |                       |             |                                 |                        | 39.21%                 |
|   |                      |                      |                      |                      |                      |                      |                |                    |                       |             |                                 |                        | 1.19929                |

Ներկայացված արդյունքների հիման վրա կարող ենք մի շաբթ եզրակացություններ կատարել: Նախ, *F*-չափանիշից ելնելով կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ամենամեծ ազդեցությունն ունի ֆինանսական ներգրավվածությունը (FI): Այն վիճակագրորեն նշանակալի է բոլոր մոդելներում, իսկ գործակիցները ցույց են տալիս, որ կամավոր կենսաթոշակային ֆոնդերի վրա վերջինիս ազդեցության էլաստիկությունը տատանվում է 0.0632-ից մինչև 0.0821: Դա նշանակում է, որ միագործոն մոդելի դեպքում ֆինանսական ներգրավվածության 1 միավոր կետով բարձրացումը հանգեցնում է կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության աճի՝ 6.32 տոկոսային կետով:

Ֆինանսական ներգրավվածության համեմատ՝ ֆինանսական գրագիտության (FL) *F*-չափանիշն ավելի ցածր է, այնուամենայնիվ, որպես գործոն դրա ադեկվատությունը ևս մեծ է, սակայն յուրաքանչյուր նոր գործոն ավելացնելիս դեպքում դրա վիճակագրական նշանակալիությունն իշխում է, իսկ վերջին մոդելի դեպքում էլ այն այլևս նշանակալի չէ:

Մակրոտնտեսական կայունությունը (INFL) և վատահությունն ինստիտուտների նկատմամբ (TR) ունեն ավելի նվազ ազդեցություն, սակայն դրանք կարևոր են բազմագործոն ռեզերվուն մոդելի՝ հնարավոր լավ տարրերակի կառուցման գործում:

Այուսակի վերջին 5 այունակները ներկայացված են կազմված մոդելների վիճակագրական հատկությունները ստուգելու/հաստատելու համար: Առաջին երկու միագործոն մոդելների դեպքում *Mallows' Cp* արժեքն էականորեն բարձր է անկախ փոփոխականների քանակ գումարած 1 արժեքից, ինչը նշանակում է, որ մյուս մոդելների համեմատ՝ այն կողմնակալ է և լավագույնս չի բացատրում կախյալ փոփոխականը, ինչը տրամաբանական է, քանի որ միայն ֆինանսական գրագիտության կամ միայն ֆինանսական ներգրավվածության մակարդակը չի կարող բացատրել երկրում կամավոր կենսաթոշակային սիեմաներում մասնակցության չափերը:

Երրորդ, չորրորդ և հինգերորդ մոդելների դեպքում, երբ ավելացնում ենք նոր գործոն՝ մակրոտնտեսական կայունությունը և/կամ ինստիտուտների նկատմամբ վստահությունը, աճում է դետերմինացիայի գործակից  $R^2$ -ը՝ մինչև 52.5%, սակայն դրանցից յուրաքանչյուրի դեպքում  $R^2(pred)$  ցուցանիշը կտրուկ անկում է՝ մինչև 36%, ինչը նշանակում է, որ մոդելը պարունակում է ավելորդ տեղեկատվություն բացատրվողի վերաբերյալ (over-fit): Յոթերորդ մոդելի դեպքում, բացի վերոնշյալ ինդրի առկայությունից, ֆինանսական գրագիտու-

թյունը որպես գործոն այլևս վիճակագրորեն նշանակալի չէ:

Վեցերորդ մոդելը լավագույնս է արտահայտում առաջարկվող վերոնշյալ փոփոխականների միջև գծային կախվածությունը. դրա բոլոր գործոնների (ֆինանսական ներգրավվածություն, ֆինանսական գրագիտության և ինստիտուտների նկատմամբ վստահություն) պարամետրերի գնահատականները նշանակալի են, ըստ ֆիշերի *F*-չափանիշի՝ այն ամբողջությամբ ադեկվատ է (14.97), ստանդարտ շեղումը (S) ամենացածրերից է, *Mallows' Cp* արժեքն ամենամուտն է անհրաժեշտ թվին:  $R^2$ ,  $R^2 adj.$  և  $R^2(pred)$  -ը ամենաբարձրն են մյուս բոլոր մոդելների համեմատ: Մոդելում ներառված գործոնները չափավոր կոռելացված են և մուլտիկուլյանեարության խնդիր չկա, քանի որ գործոնների *VIF* արժեքները 5-ից փոքր են: Մոդելի խաչաձև վավերացման համար (K-fold cross-validation) նաև հաշվարկել ենք *10-fold S* և *10-fold R<sup>2</sup>* ցուցանիշները, որոնք ևս համապատասխանաբար ամենացածրն ու ամենաբարձրն են: Նշանակած գործոնների և կախյալ փոփոխականների կապը գրաֆիկորեն ներկայացված է գծապատկեր 1-ում:

Առաջարկվող մոդելի ռեզերվուն հավասարումը կունենա հետևյալ տեսքը.

$$\ln VOL_i = 0.137 + 0.0350 * FL_i + 0.0690 * FI_i - 0.0487 * TR_i + \varepsilon_i$$

Որտեղ  $i$ -ն երկիրն է:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հետազոտության վարկածները հաստատվում են. ֆինանսական ներգրավվածությունը դրականորեն է ազդում կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա, և ի տարրերություն մյուս ուսումնասիրված գործոնների՝ ավելի էական ազդեցություն ունի վերջինիս վրա:


## ԵՇՐԱՎԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային հիմնախնդիրների լուծման ուղիներից է ոչ միայն երկրում պարտադիր կենսաթոշակային համակարգերի ներդրումը, այլ նաև կամավոր կենսաթոշակային ֆոնդերի դերի բարձրացումը: Կատարված հետազոտության արդյունքում բացահայտվել են՝ ինչ գործոններ են ազդում կամավոր կենսաթոշակային սիեմաներում մասնակցության վրա, ինչպես նաև հաշվարկվել են այդ գործոնների ազդեցության չափերը:

Ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բնակչության կողմից մասնավոր կենսաթոշակային համակարգերի նկատմամբ թերահավատությունը կամ անտարբերությունը հնարավոր է հաղթահարել ոչ միայն ֆինանսական կրթման միջոցով և երկրում գործող ինստիտուտների որակի

բարձրացմամբ, դրանց գործունեության թափանցիկության մեծացմամբ և այլն, այլ նաև քաղաքականություն մշակող և իրականացնողները պետք է խթանեն երկրում

ֆինանսական ներգրավվածության մակարդակի բարձրացումը, քանի որ այն էականորեն է ազդում կենսաթոշակային համակարգում մասնակցության վրա:



**Գծապատկեր 1:** Կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ազդող գործոնների միջև կապերը

### Օգտագործված աղյուրների ցանկ

1. **Banca D’italia Eurosystema**, “Italian household income and wealth in 2010”, Supplements to the Statistical Bulletin. [https://www.bancaditalia.it/pubblicazioni/indagine-famiglie/bil-fam2010/en\\_suppl\\_06\\_12n.pdf?language\\_id=1](https://www.bancaditalia.it/pubblicazioni/indagine-famiglie/bil-fam2010/en_suppl_06_12n.pdf?language_id=1)
2. **A. A. Babajide, F. B. Adegbeye, A. E. Omankhanlen**, “Financial Inclusion and Economic Growth in Nigeria”, International Journal of Economics and Financial Issues, 2015, 5(3), 629-637. <https://www.econjournals.com/index.php/ijefi/article/view/1154/pdf>
3. **CGAP**, “Achieving the Sustainable Development Goals: The Role of Financial Inclusion”, Washington, 2016. [https://www.cgap.org/sites/default/files/researches/documents/Working-Paper-Achieving-Sustainable-Development-Goals-Apr-2016\\_0.pdf](https://www.cgap.org/sites/default/files/researches/documents/Working-Paper-Achieving-Sustainable-Development-Goals-Apr-2016_0.pdf)
4. **A. Demirguc-Kunt, L. Klapper, And D. Singer**, “Financial Inclusion and Inclusive Growth: A Review of Recent Empirical Evidence”, World Bank Group, Development Research Group Finance and Private Sector Development Team, April 2017. <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/26479/WPS8040.pdf?sequence=1&isAllowed=true>
5. **L. Klapper, A. Lusardi, P. Oudheusden**, “Financial Literacy around the world: Insights from the Standard & Poor’s Ratings Services global financial literacy survey”. [https://gflec.org/wp-content/uploads/2015/11/3313-Finlit\\_Report\\_FINAL-5.11.16.pdf?x28148](https://gflec.org/wp-content/uploads/2015/11/3313-Finlit_Report_FINAL-5.11.16.pdf?x28148)
6. **O. M. Landerretche, C. Martínez**, “Voluntary savings, financial behavior, and pension finance literacy: evidence from Chile”, Cambridge University Press, 2013. <https://www.cambridge.org/core/journals/journal-of-pension-economics-and-finance/article/abs/voluntary-savings-financial-behavior-and-pension-finance-literacy-evidence-from-chile/2652EA3FE86F199DEA8948A1A32AFD02>
7. **OECD**, Pensions at a Glance 2017. [https://www.oecd-ilibrary.org/docserver/pension\\_glance-2017-en.pdf?expires=1618619162&id=id&acname=guest&checksnum=A6027D998BED143BB24CE5AEAF2E946D](https://www.oecd-ilibrary.org/docserver/pension_glance-2017-en.pdf?expires=1618619162&id=id&acname=guest&checksnum=A6027D998BED143BB24CE5AEAF2E946D)
8. **OECD** stat., Pension at a glance, 2018. [https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=PA\\_G&lang=en](https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=PA_G&lang=en)
9. **OECD**, Pension Markets in Focus 2019. <https://www.oecd.org/daf/fin/private-pensions/Pension-Markets-in-Focus-2019.pdf>
10. **O. Ricci, M. Caratelli**, “Financial literacy, trust and retirement planning”, Cambridge University Press, August 2015. <https://www.cambridge.org/core/journals/journal-of-pension-economics-and-finance/article/financial-literacy-trust-and-retirement-planning/ACB1BFD95A0672EB7896C874BFA0C89>
11. **K. Schwab, X. Sala-I-Martín**, World Economic Forum, “The Global Competitiveness Report 2017–2018”. <http://www3.weforum.org/docs/GCR2017-2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2017%20%932018.pdf>

12. **P. Taylor Gooby**, "Uncertainty, Trust and Pensions: The Case of the Current UK Reforms", 2015. <https://onlinelibrary.wiley.com/doi/abs/10.1111/j.1467-9515.2005.00436.x>
13. **WORLD BANK**, Global Financial Development Database, October 2019. <https://www.worldbank.org/en/publication/gfdr/data/global-financial-development-database>
14. **L. Համբարձումյան**, «Ֆինանսական գրագիտության ազդեցությունը կենսաթոշակային ֆոնդե-

րում մասնակիցների ներգրավվածության վրա <<ում»», «Ալլունտրանք» գիտական ամսագիր, Երևան, 2019. <http://alternative.am/wp-content/uploads/2019/10/%D5%8D%D5%A5%D5%BA%D5%BF%D5%A5%D5%B4%D5%A2%D5%A5%D6%80..pdf>

*Сдана/Հանձնվել է՝ 17.04.2021*

*Рецензирована/Գրահուսվել է՝ 28.04.2021*

*Принята/Ընդունվել է՝ 02.05.2021*